ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Փգիշտիի 1

№ 1085-Ա « 21 » մարտի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի Հ.1173-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել ՀՀ պաշտպանության նախարարի գրությունը՝ Երևանի քաղաքապետի 2007 թվականի մայիսի 16-ի հ.1173-Ա որոշմամբ ճշտված Իսակովի պողոտային հարակից ՊՆ 90999 զորամասի հողամասի սահմանները վերաճշտելու և հատակագիծ թողարկելու հարցի վերաբերյալ:

Քննարկվող հողամասն ընդգրկված է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ գտնվում է տարածագնահատման համաձայնեցված սխեմայի 5-րդ գոտում:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ կետի 1.1 ենթակետով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 59-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշումներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարաության 2025 թվականի մարտի 14-ի հ.ՊՆ/510/2978-2025 գրությունը և առդիր փաստաթղթերը, ինչպես նաև աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.61490-24 եզրակացությունը ու Ն/3012-25 գրությունը.

1.Երևանի քաղաքապետի 2007 թվականի մայիսի 16-ի «Նուբարաշեն-2 զինավան, Հալաբյան 19 /Մոնթե Մելքոնյանի անվան վարժարան/, Արցախի 3-րդ նրբանցք /Պարենային բազա/, Արցախի 3-րդ նրբանցք /90035 զորամաս/, Իսակովի պողոտային հարող տարածք /90999 զորամաս/, Արցախի 61 /98360 զորամաս/, Արին Բերդի նրբանցք /57706 զորամաս/, էրեբունի օդանավակայանին հարակից տարածք /90453 զորամաս/ հասցեներում ՀՀ պաշտպանության նախարարությանը պատկանող շենք-շինությունների զբաղեցրած հողամասերի հողօգտագործման իրավունքները ձևակերպելու մասին» հ.1173-Ա որոշման մեջ «2649.58քմ» թիվը փոխարինել «2589.25քմ» թվով:

2.Սահմանել, որ ՀՀ պաշտպանության նախարարությանը պատկանող Իսակովի պողոտային հարակից ՊՆ 90999 զորամասի զբաղեցրած 2589.25քմ մակերեսով հողամասի

սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով, չեղյալ համարելով հողամասի հ.25.06.2007թ. հ.928-2007 գլխավոր հատակագիծը:

3.Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ Իսակովի պողոտային հարակից ՊՆ 90999 զորամասի զբաղեցրած 2589.25քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը սահմանել հատուկ նշանակության:

4.Իսակովի պողոտային հարակից ՊՆ 90999 զորամասին տրամադրել «Ծովակալ Իսակովի պողոտա, հ.24/16» հասցեն:

5.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին՝ որոշման հիման վրա տրամադրված անշարժ գույքերի հասցեների վերաբերյալ տեղեկատվությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե և Հայաստանի Հանրապետության ոստիկանության Երևան քաղաքի համապատասխան բաժնին, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարին:

6.Ընդունել ի գիտություն, որ սույն որոշումը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

7. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

8. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

9. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա. Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ